ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-22/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հրդեհային ազդարարման և հրդեհաշիջման համակարգի նախագծերի պատրաստման ծառայության ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը տեղի է ունեցել

22.03.2022թ. ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Ս. Դավթյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Գ. Հայրապետյանը
Ս. Քոչարյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Հարությունյանը
Ա. Մովսիսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ.Նիկոլյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կարիքների համար Երևանի 308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի հրդեհային ազդարարման և հրդեհաշիջման համակարգի նախագծերի պատրաստման ծառայության ձեռքբերման նպատակով ս.թ.մարտի 11-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-22/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով, ս.թ. մարտի 21-ին, ժամը 12.00-ին:

Հանձնաժողովը արձանագրեց.

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	գործունեության հասցեն, էլ. փոստ հասցեն	հեռախոսա-համար	ՀՎՀՀ
1	ԳՐԻՄԱՆ ՍՊԸ	ՀՀ. ք. Երևան, Կոմիտասի 1-66 griman58@mail.ru	010 22 44 60	02230486
2	Էլլիպս Ջիէյ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ն. Տիգրանյան 27 el@sec.am	010 23 01 07	00067177

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 ԳՐԻՄԱՆ ՍՊ և Էլլիպս Ջիէյ ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ բացառությամբ

- ✓ <u>ԳՐԻՄԱՆ ՍՊԸ</u>
- ✓ Բացակայող փաստաթղթեր՝
- ✓ 1. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր,
- ✓ 2. Մեծ տոնավաճառ ՍՊԸ /պայմանագիր, հարկային հաշիվ/
- ✓ Արմսվիսբանկ ՓԲԸ /պայմանագիր/
- ✓ Ֆիլիպ Մորրիս Արմենիա ՍՊԸ /պայմանագիր, հարկային հաշիվ/
- ✓ 3. Հրավերով պահանջվող լիցենզիան՝ ներդիրով
- ✓ */Պահանջվող լիցենզիա՝ Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեություն, ներդիր՝ կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր:/*
- ✓
- ✓ <u>Էլլիպս Ջիէյ ՍՊԸ</u>
- ✓ 1. Ներկայացված պայմանագրի ավարտական փաստաթղթեր / հանձնման-ընդունման արձանագրություն, հարկային հաշիվ/
- ✓ 2. Աշխատանքային ռեսուրսներ /հավելված 1.2/՝ ըստ հրավերով նախատեսված ձևաչափի և հաստատված տարբերակով: Կցել հիմնավորող փաստաթղթերը
- ✓ */աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև՝ մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները/*

4. Մասնակիցների առաջարկած գինը **ՀՀ դրամ**

Հ/հ	գնման առարկայի անվանումը	մրցույթին մասնակցող կազմակերպության			
		անվանումը	գնային առաջարկ		
			արժեք	ԱԱՀ	ընդհանուր գին
1	Երևանի 308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի հրդեհային ազդարարման և հրդեհաշիջման համակարգի նախագծերի պատրաստման ծառայության ձեռքբերում	ԳՐԻՄԱՆ ՍՊԸ	1 000 000	200 000	1 200 000
		Էլլիպս Ջիէյ ՍՊԸ	4 000 000	800 000	4 800 000

5. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 41 և 42-րդ կետերով՝ նիստը կասեցնել է 1 /մեկ/ աշխատանքային օրով և մասնակիցներից պահանջել էլեկտրոնային փոստով ներկայացնել շտկված փաստաթղթերը մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ **23.03.2022 ժամը 11.30-ը**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստը շարունակվել է 23.03.2022թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյանը

Անդամներ՝ Գ. Հայրապետյանը
Ս. Քոչարյանը
Ա. Հարությունյանը
Ա. Մովսիսյանը

6. Հանձնաժողովը արձանագրեց

Սույն արձանագրության 3.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները ԳՐԻՄԱՆ ՍՊ և Էլլիպս Ջիէյ ՍՊ ընկերությունների կողմից սահմանված ժամկետում շտկվել են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին /շտկված հայտերը կցված են/:

7. Հանձնաժողովը որոշեց

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը և ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ նիստը կասեցնել երկու աշխատանքային օրով՝ մինչև **25.03.2022թ. ժամը 12.00-ը**՝ ընտրված մասնակից որոշելու նպատակով, ԳՐԻՄԱՆ ՍՊ և Էլլիպս Ջիէյ ՍՊ ընկերություններին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստը շարունակվել է 29.03.2022թ. ժամը 11.00-ին

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյանը

Անդամներ՝ Գ. Հայրապետյանը
Ս. Քոչարյանը
Ա. Հարությունյանը
Ա. Մովսիսյանը

8. Հանձնաժողովը արձանագրեց

Մինչև բանակցությունների համար նախատեսված ժամկետի ավարտը 25.03.2022թ. ժամը 12.00-ը՝ ԳՐԻՄԱՆ ՍՊ ընկերության կողմից էլեկտրոնային փաստով ներկայացվել է վերջնական գին /կցվում է/: Գների նվազեցման շուրջ բանակցություններ են վարվել Էլլիպս Ջիէյ ՍՊ ընկերության ներկայացուցիչների հետ, որի արդյունքում 1-ին չափաբաժնով նախատեսված ծառայության համար ներկայացվել է նոր գնային առաջարկ /կցվում է/:

ՀՀ դրամ

չ/հ	Գնման առարկան	Գնման հայտով նախատեսված նախահաշ-վային գին	Մասնակցի			
			Անվանումը	Գնային առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Երևանի 308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի հրդեհային ազդարարման և հրդեհաշիջման համակարգի նախագծերի պատրաստման ծառայության ձեռքբերում	300 000	ԳՐԻՄԱՆ ՍՊԸ	1000000	200000	1200000
			Էլլիպս Ջիէյ ՍՊԸ	990000	198000	1188000

Բանակցությունների արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված վերանայված գները գերազանցում են գնման հայտով նախատեսված գումարը /գնառաջարկները կցվում են/:

9. Հանձնաժողովը որոշեց

9.1 Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի է/ պարբերությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

9.2 Հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստերը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Գ. Հայրապետյան

Ս. Քոչարյան

Ա. Հարությունյան

Ա. Մովսիսյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան